

ՄՐՑՈՒՅԹ

«Արմենիան Քարդ» ՓԲԸ ինտերնետային կայքի ծրագրա-տեխնիկական համակարգի մշակման, ներդրման և դրա հետագա երաշխիքային և հետերաշխիքային սպասարկող կազմակերպության ընտրության

1. Մրցույթի պայմաններ

1.1. «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն հայտարարում է բաց մրցույթ՝ Արմենիան Քարդ» ՓԲԸ ինտերնետային կայքի ծրագրա-տեխնիկական համակարգի մշակման, ներդրման և դրա հետագա երաշխիքային և հետերաշխիքային սպասարկող կազմակերպության ընտրության նպատակով:

Մրցույթի մասնակիցները մրցութային առաջարկները կարող են ներկայացնել ք. Երևան, Խորենացի 15, Էլիտ Պլազա Բիզնես կենտրոն, 8-րդ հարկ, փակ ծրարներով: Մրցութային առաջարկների ներկայացման վերջնական ժամկետն է 2017թ.-ի հուլիսի 24-ը ժամը 18.00:

Մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձ հանդիսացող ցանկացած կազմակերպություն:

1.2. Մրցույթը անցկացվելու է երկու փուլով:

1.3. **Առաջին փուլում** մասնակիցները մրցութային առաջարկի մեջ պետք է ներկայացվեն մրցույթին մասնակցող կազմակերպության վերաբերյալ անհրաժեշտ տվյալները, մասնակցի կողմից մրցույթին ներկայացվող առաջարկները և պահանջվող այլ տեղեկություններ:

1.4. Առաջարկը առնվազն պետք է պարունակի հետևյալ տեղեկություններն ու փաստաթղթերը.

1.4.1. մրցույթի մասնակցի անվանունը, գտնվելու վայրը (հասցեն), կոնտակտային տվյալներ (հեռախոսահամար, էլ. փոստ, այլ), ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից տրված վկայականի պատճեն (ՀՀ ռեգիոնների համար) գործունեության բնույթը և ինտերնետային կայքեր և շարժական հավելվածներ (mobile application) մշակելու, ներդնելու և սպասարկելու ոլորտում ունեցած աշխատանքների և նախագծերի մասին տեղեկատվություն /ունեցած փորձը/,

1.4.2. կազմակերպության այն աշխատակիցների ցուցակը, որոնց ենթադրվում է ներգրավել համակարգի մշակմանը և ներդրմանը, իրենց աշխատանքային կենսագրությունը (CV) և կատարած աշխատանքների ցանկը,

1.4.3. առաջարկվող տեխնիկական լուծումների և տեխնոլոգիաների նկարագրությունը,

1.4.4. երաշխիքային և ետերաշխիքային սպասարկման պայմանները,

1.4.5. գործընկերների ցանկը,

1.4.6. Վերջին հրապարակված կամ, եթե չի հրապարակվում՝ վերջին ֆինանսական տարվա հաշվետվությունը (ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը եւ Շահույթի կամ վնասի եւ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը) եւ աուդիտորական եզրակացությունը (առկայության դեպքում),

1.4.7. Տեղեկանք հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով՝ Ընկերության պարտավորությունների վերաբերյալ մայիսի 31-ի դրությամբ,

1.4.8. ԱՔՌԱ վարկային բյուրոյից վարկային պատմության վերաբերյալ ԱՌՅ զեկույցը :

2. Մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջներ

- 2.1. Մրցույթի մասնակիցները պետք է ունենան առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ ՀՀ շուկայում web-համակարգերի, IOS և Android օպերացիոն համակարգերի համար հավելվածների մշակման ոլորտում: Վճարահաշվարկային ոլորտում (վճարումների ընդունում, վճարահաշվարկային կազմակերպությունների հետ աշխատանք, էլեկտրոնային առևտուր) աշխատանքային փորձի առկայությունը կդիտարկվի որպես առավելություն: Միջազգային շուկայում աշխատանքային փորձի առկայությունը նույնպես կդիտարկվի որպես առավելություն:
- 2.2. Մրցույթի մասնակիցները պետք է ինքնուրույն, սեփական ռեսուրսներով կատարեն համակարգի մշակման, տեստավորման և ներդրման աշխատանքները: Ցանկացած աշխատանքների (բացառությամբ ինտեգրետային էջերի դիզայնի մշակման) պատվիրակումը երրորդ կողմին արգելվում է:
- 2.3. Համակարգի վերջնական տարբերակի բոլոր կոմպոնենտների համար պետք է տրամադրվեն համապատասխան տեխնիկական փաստաթղթերը:
- 2.4. Համակարգի վերջնական տարբերակի բոլոր կոմպոնենտների ծրագրային կոդերը և իրենց հեղինակային իրավունքը պետք է փոխանցվեն «Արմենիան Քարդ» Ընկերությանը:
- 2.5. Առաջարկը պետք է պարունակակի երաշխիքային և ետերաշխիքային սպասարկման պայմաններ: Երաշխիքային և ետերաշխիքային սպասարկման ընթացքում պետք է ապահովվեն առնվազն հետևյալ պահանջները՝
 - 2.5.1. շահագործման ընթացքում հայտնաբերված սխալների շտկում
 - 2.5.2. օրենսդրությամբ կամ կարգավորող մարմինների նորմատիվ ակտերով սահմանված պարտադիր պահանջների ապահովում,
 - 2.5.3. այն դեպքերում, երբ
 - 2.5.3.1. կիրառվող օպերացիոն համակարգերում, ծրագրային կոմպոնենտներում և տեխնոլոգիաներում հայտնաբերվում է տեղեկատվական անվտանգությանը վերաբերվող խոցելիություն կամ
 - 2.5.3.2. կիրառվող օպերացիոն համակարգերը, ծրագրային կոմպոնենտները և տեխնոլոգիաները դուրս են գալիս շահագործումից կամ մատակարարների կողմից դադարեցվում է իրենց սպասարկումը՝ ապահովել մշակված ծրագրային ապահովման համատեղելիությունը օպերացիոն համակարգերի, ծրագրային կոմպոնենտների և տեխնոլոգիաների նոր տարբերակների հետ, որոնք զրկված են վերը նշված պրոբլեմներից:
 - 2.5.4. անհրաժեշտության դեպքում – հավելվածների համատեղելիության ապահովում IOS և Android օպերացիոն համակարգերի նոր տարբերակների հետ:
 - 2.5.5. ծառայությունների մատակարարների կողմից գործող ֆունկցիոնալությունում փոփոխությունների դեպքում – նշված փոփոխությունների հետ համատեղության ապահովում:

Երկրորդ փուլ.

- 2.6. Առաջին փուլում ներկայացված առաջարկներից պատվիրատուն կկազմի երկրորդ փուլի մասնակիցների ցուցակը, որոնց կներկայացվի ապագա համակարգի ավելի մանրամասն նկարագրությունը, որի հիման վրա երկրորդ փուլում մասնակիցները պետք է ներկայացնեն՝
 - համակարգի մշակման և ներդրման աշխատանքային պլան/Ժամանակացույց/Ժամկետներ,

- գնային առաջարկ /վճարման կարգը և այլն/,
 - երաշխիքային և ետերաշխիքային սպասարկման պայմանները,
- 2.7. «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն պատասխանատու չէ մրցույթի մասնակիցների այն ծախսերի համար, որոնք պայմանավորված են մրցութային առաջարկի նախապատրաստման և ուղարկման հետևանքով մրցույթի արդյունքներից
- 2.8. Առաջարկվող գները պետք է ներկայացվեն ՀՀ դրամով:
- 2.9. Մրցութային հանձնաժողովը մինչև մրցույթի հաղթողին ճանաչելը անհրաժեշտության դեպքում կարող է մրցույթի մասնակիցներից պահանջել լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր:
- 2.10. Ընկերությունը կարող է ցանկացած ժամանակ սույն մրցույթը չեղյալ հայտատարել:

3. Հավանարգի բաղադրիչ մասեր

3.1. Տեղեկատվական կայք

- Տեղեկատվություն Ընկերության մասին
- Հայտարարությունների և նորությունների հրապարակում և խմբագրում
- Ֆինանսական հաշվետվությունների և այլ պաշտոնական տեղեկատվության հրապարակում և խմբագրում
- Մրցույթների հայտարարությունների հրապարակում և խմբագրում
- Թափուր աշխատատեղերի համար հայտարարությունների հրապարակում և խմբագրում
- Անդամ-բանկերի մասին տեղեկատվություն

3.2. Անձնական կարիքների համակարգ

- Օգտագործողների գրանցում
- Քարտերի կցում
- Համատեղելիություն ներքին պրոցեսինգային համակարգերի հետ (ԱրՔա-ն տրամադրում է համապատասխան ստանդարտները և փաստաթղթերը)
- Համատեղելիություն 3DSecure ստանդարտի հետ
- Համատեղելիություն արտաքին վճարային ինտեգրատորների և այլ վճարովի և/կամ տեղեկատվական ծառայությունների մատակարարների հետ, այդ թվում պետական

3.3. IOS և Android օպերացիոն համակարգերի համար native հավելվածների մշակում (միայն բջջային հեռախոսների համար)

- Համատեղելիություն անձնական կարիքների ամբողջ ֆունկցիոնալության հետ
- Բանկոմատների փնտրման համակարգ
- Push-ծանուցումներ:

3.4. Կառավարման ենթահամակարգ – ծրագրային մոդուլ, որի միջոցով կատարվելու է մնացած կոմպոնենտների կարգավորում, կառավարում, մոնիտորինգ, մատյանների ընթերցում, արխիվացում, հաճախորդների սպասարկում, հաճախորդների ծանուցում և այլ խնդիրներ:

3.5. Վերը նշված բաղադրիչ մասերի դիզայնի, օգտագործողի ինտերֆեյսի, բիզնես-պրոցեսների (UI/UX) մշակում: Վերը նշված բաղադրիչ մասերի ինտերֆեյսը (ինչպես գրանցված օգտագործողի, այնպես էլ այցելուների համար) պետք է աշխատի բազմալեզու միջավայրում:

4. Համակարգին ներկայացվող ընդհանուր պահանջներ

- 4.1. Համակարգը պետք է աշխատի 24/7 ռեժիմում, բոլոր տեխնիկական և ծրագրային կոմպոնենտները պետք է լինեն առնվազն կրկնօրինակված՝ աշխատանքի անընդհատությունը ապահովելու նպատակով: Ցանկալի է կլաստերային տեխնոլոգիաների կիրառումը, համակարգը պետք է պարտադիր ունենա ընդարձակվելու հնարավորություն:

- 4.2. Համակարգը պետք է ընդունակ լինի ապահովելու մեկ վայրկյանում մինչև 100 հարցումների մշակումը:
- 4.3. Նախագիծը պետք է հաշվի առնի համակարգի ընդլայնման հնարավորությունը: Ընդլայնումը վերաբերվում է ինչպես համակարգի տեխնիկական բաղադրիչներին, օրինակ՝ սերվերների քանակի ավելացում ծանրաբեռնվածության նվազեցման համար, այնպես էլ մատուցվող ծառայությունների/ծառայությունների խմբերի քանակի ավելացում:
- 4.4. Համակարգը պետք է բավարարի web-համակարգերին վերաբերվող անվտանգության ստանդարտների պահանջներին, PCI DSS ստանդարտին: Մշակման ընթացքում պետք է բացառվի հնացած կամ խոցելի ծրագրային ապահովման և/կամ տեխնոլոգիաների կիրառումը:
- 4.5. Համակարգի շահագործման համար պետք է օգտագործվեն հայտնի և լայն կիրառում ունեցող ծրագրային հարթակներ, օպերացիոն համակարգեր և այլ տեխնոլոգիաներ, որոնք սակայն պետք է համապատասխանեն վերը նշված անվտանգության ստանդարտներին: Նախընտրություն է տրվելու այն լուծումներին, որոնցում կիրառվելու են բաց կոդով (open source) տեխնոլոգիաները: